



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Մ Ա Ն

16 մարտի 2017 թվականի N 248 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1499-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր, անվտանգության սերտիֆիկատներ և համապատասխանության տեղեկանք տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի, անվտանգության սերտիֆիկատների և համապատասխանության տեղեկանքի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1499-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) N 1 հավելվածը 6-րդ կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին ենթակետով.

«4.1) N 5 ձևի անասնաբուժական վկայականը տրվում է սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի և հումքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով փոխադրման և իրացման համար:».

2) N 1 հավելվածի 5-րդ, 7-րդ, 11-րդ և 12-րդ կետերը «3» թվից հետո լրացնել «5» թվով.

3) N 2 հավելվածի N 5 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մարտի 17  
Երևան



Ա Ն Ա Ս Ն Ա Բ ՈՒ Ժ Ա Կ Ա Ն Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N \_\_\_\_\_  
----- 20 թ.

**Սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի  
և հումքի՝ հանրապետության տարածքով փոխադրման և իրացման**

Սույն անասնաբուժական վկայականը տրվում է \_\_\_\_\_-ին  
(նշել իրավաբանական անձի անվանումը, գործունեության իրականացման վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության  
վայրը, անձնագրային տվյալները)

Ենթահսկման բեռն արտադրված է \_\_\_\_\_-ի  
(նշել սպանդանոցի անվանումը, գործունեության իրականացման վայրը, մորթի ամսաթիվը)

սպանդանոցային մորթի արդյունքում ստացված \_\_\_\_\_-ի  
(նշել սպանդանոցի ստացված մթերքի և հումքի տեսակը, քանակը, (մսեղիքի հատ և կգ կամ մսի կգ)

և անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկված \_\_\_\_\_  
(նշել անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության համարը, տալու ամսաթիվը և տվողի անունը, ազգանունը)

տեղափոխման համար \_\_\_\_\_  
(նշել տեղափոխման վայրը, փոխադրամիջոցի տեսակը, պետական համարանիշը, փոխադրման պայմանները,  
ստացող անձի անունը, ազգանունը կամ անվանումը, գործունեության իրականացման վայրը կամ սահմանային հսկիչ կետը)

իրացման (վաճառքի) կամ հանրային սննդի կազմակերպման կամ արտադրության (վերա-  
մշակման) կամ արտահանման նպատակով (ընդգծել):

Լրացուցիչ նշումներ \_\_\_\_\_

Անասնաբուժական վկայականը տվել է \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, ստորագրությունը)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

